

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԱՌԸՆԹԵՐ  
«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ և  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ի

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի ազգային ազրարային համալսարանի <<Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննման և փորձաքննության մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուսումնամեթոդական կենտրոնը>> (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպվել է ՀՀ կառավարության 2007 թ.-ի փետրվարի 15-ի N690-ն <<Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգի և լիցենզիայի ձևը հաստատելու մասին>> որոշման և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ.-ի նոյեմբերի 8-ի N 1041-Ա/ք հրամանի և ՀԱԱՀ-ի ռեկտորի 2007թ.-ի նոյեմբերի 28 N 142/ ԱԾ հրամանի հիման վրա:
2. Կենտրոնը ՀԱԱՀ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը կարող է իրականացնել ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստում և վերապատրաստում, ինչպես նաև իրականացնել ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և ճանապարհատրանսպորտային պատահարների փորձաքննություն:
3. Կենտրոնի գործունեությունը իրականացվում է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

4. Կենտրոնի հասցեն է ք.Երևան, Տերյան փ.74:

5. Կենտրոնը գործում է ՀԱԱՀ ստորաբաժանման կարգավիճակով և իր գործունեությամբ հաշվետու է ՀԱԱՀ ռեկտորին:

#### ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Կենտրոնը.

ա. իրականացնում է ՀՀ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստում և վերապատրաստում,

բ. կազմակերպում է ուսուցումն անցած ունկնդիրների որակավորման քննություն և տալիս համապատասխան նմուշի վկայական, որի գործողության ժամկետը սահմանվում է երկու տարի:

գ. իրականացնում է ավտոմոբիլների տեխնիկական զննություն և փորձաքննության ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում՝ այդ բնագավառի գործառույթները կանոնակարգող նորմատիվ ակտերի հիման վրա:

դ. առաջարկություններ է ներկայացվում կենտրոնում դասավանդող դասախոսական կազմի ձևավորման վերաբերյալ,

ե. իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և ճանապարհատրանսպորտային պատահարների փորձաքննություն, ըստ ներկայացվող հայտերի և պայմանագրերի,

զ. ձևավորում, կազմում է կենտրոնի տարեկան ֆինանսական նախահաշիվը և ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

է. ապահովում է հաշվետվությունների և օրենսդրությամբ նախատեսված այդ կարգի այլ փաստաթղթերի ճիշտ կազմումը, վարումը, պահպանությունը և պատասխանատվություն է կրում դրա համար:

Կենտրոնի կառավարումը

Կենտրոնի մեթոդական խորհուրդը

7. Մեթոդական խորհուրդը ստեղծվում է կենտրոնի տնօրենի ներկայացմամբ և հաստատվում է համալսարանի գիտխորհրդի կողմից: Մեթոդխորհրդի կազմում ընդգրկվում են կենտրոնի տնօրենը, ճանապարհային երթևեկության կազմակերպման, ավտոտրանսպորտային միջոցների, ավտոմոբիլի տեխնիկական վիճակի և ճանապարհատրանսպորտային պատահարների փորձաքննության

բնագավառների մասնագետներ, ինչպես նաև ռեկտորի կողմից առաջարկված անձինք:

8. Կենտրոնի մեթոդական խորհուրդը կարգավորում է ուսումնական ծրագրերի կազմումը՝ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակին վերաբերվող նորմատիվային փաստաթղթերով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:
9. Իրականացնում է միջոցներ ճանապարհատրանսպորտային պատահարների փորձաքննության ժամանակակից մեթոդների ներդրման և կիրառման, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հետազոտման և գնահատման առաջավոր մեթոդիկաների մշակման և կիրառման վերաբերյալ:
10. Կենտրոնի ուսումնամեթոդական ծրագրերին ներկայացվող պահանջները, սահմանված կարգով, որոշվում են պետական կրթական չափորոշիչներով:
11. Մեթոդական խորհուրդը նիստեր է գումարում ըստ անհրաժեշտության, ոչ պակաս քան տարեկան մեկ անգամ արտահերթ նիստեր կարող են գումարվել ՀԱԱՀ ռեկտորի, կենտրոնի տնօրենի, կամ կենտրոնի մեթոդական խորհրդի անդամների 1/3 նախաձեռնությամբ:
12. Մեթոդական խորհրդի որոշումները ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցել են խորհրդի անդամների առնվազն 2/3:
13. Կենտրոնի մեթոդական խորհուրդը
  - ա. համալսարանի խորհրդին առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ,
  - բ. սահմանված ժամկետներում քննարկում և հաստատում է դասախոսների աշխատանքային պլանները և նրանցից ընդունում հաշվետվություններ,
  - գ. առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի թեկնածությունների, այլ կազմակերպություններից մասնագետներ հրավիրելու և նրանց հետ համապատասխան պայմանագրեր կնքելու վերաբերյալ,
  - դ. սահմանված կարգով քննարկում և ներկայացնում է ուսումնական պլանները, առարկաների ծրագրերը, հրատարակության ներկայացվող ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները:

## ՏՆՕՐԵՆԸ

14. Կենտրոնը ղեկավարում է տնօրենը, որը սահմանված կարգով ընտրվում է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից: Գիտական խորհրդի այդ որոշումը ձևակերպվում և գործադրվում է ռեկտորի հրամանով:
15. Տնօրենն իր գործունեությամբ անմիջականորեն հաշվետու է ՀԱԱՀ-ի ռեկտորին և գիտխորհրդին:
16. Կենտրոնի տնօրենը.
  - ա. ղեկավարում է կենտրոնի ուսումնական, մեթոդական ողջ գործունեությունը, փորձաքննությունների անաչառությունը և օբյեկտիվությունը և պատասխանատվություն է կրում այդ գործունեության համար:
  - բ. նախագահում է ունկնդիրների որակավորման ավարտական քննությունների քննական հանձնաժողովը, հանձնում հաստատված նմուշի վկայականներ:
  - գ. համալսարանի խորհրդում, գիտխորհրդում, ռեկտորատում և մեթոդական խորհրդում ներկայանում է կենտրոնին վերաբերող հարցեր,
  - դ. հսկողություն է իրականացնում հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների և այդ կարգի այլ փաստաթղթերը ճիշտ կազմելու, պահպանելու և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ու կարգով ՀԱԱՀ հաշվապահությանը ներկայացնելու նկատմամբ և պատասխանատվություն է կրում դրա համար,
  - ե. պատասխանատվություն է կրում կենտրոնի հատկացված գույքի պահպանման, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև իր մեղքով այդ գույքի պատճառված վնասի համար,
  - զ. իրականացնում է իրավաչափ այլ գործունեություն, ելնելով կենտրոնի գործունեության բնույթից և առանձնահատկություններից:
17. Ունկնդիրների հավաքագրումը կատարվում է ըստ ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կողմից լիցենզավորված տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների կողմից տրված ուղեգրերի:
18. Կենտրոն կարող են ընդունվել ՀՀ կառավարության 2007թ.-ի փետրվարի 15-ի N690-Ն որոշման հավելված 1-ի աղյուսակ 2-ում նշված ավտոմոբիլային պրոֆիլի մասնագիտությունների դիպլոմ ունեցող անձինք, ինչպես նաև նշված հավելվածի 48 և 49 կետերում նշված անձինք:
19. Կենտրոնում ուսուցումը վճարովի է:

20. Կենտրոնի ուսումնական ծրագրերը հաստատվում են ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում:
21. Կենտրոնում ուսուցումը իրականացվում է ժամը 1330-ից մինչև 1800:
22. Կենտրոնում ուսուցումն ավարտվում է որակավորման քննությամբ և համապատասխան նմուշի վկայականի հանձնամբ:
23. Կենտրոնում ուսուցման վճարովի ծառայությունները իրականացվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001թ. հոկտեմբերի 10-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պայմաններով:
24. Սույն կանոնակարգի 23-րդ կետով նախատեսված վճարովի ուսուցման ծառայությունների համար ստացված գումարները կենտրոնը սահմանված կարգով մուտք է անում ՀԱԱՀ հաշվապահության դրամարկղ:
25. Կենտրոնի գույքն ու դրամական միջոցները պատկանում են Հայաստանի ազգային ազրարային համալսարանին:
26. Կենտրոնի դասախոսների և աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը կատարվում է նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի համաձայն:
27. Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է ՀԱԱՀ-ի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ:  
Ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ.-ի նոյեմբերի 8-ի N 1041-Ս/Ք «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստման ու վերապատրաստման դասընթացների անցկացումը և մասնագետների պատրաստումը ապահովելու մասին» հրամանի.

### **Հրամայում եմ՝**

1. Հայաստանի ազգային ազրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ավտոտրակտորների և տրանսպորտային փոխադրումների ամբիոնին առընթեր կազմակերպել «Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննման և փորձաքննության մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուսումնամեթոդական կենտրոն» (այսուհետև Կենտրոն):

2. Կենտրոնի տնօրենի պարտականությունները դնել Ավտոտրակտորների և տրանսպորտային փոխադրումների ամբիոնի վարիչ Ն.Ա.Բազիկյանի վրա:
3. Հանձնարարել կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Ն.Ա.Բազիկյանին.
  - 3.1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստումը և վերապատրաստումը կազմակերպել ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ.-ի նոյեմբերի 8-ի N1041Ա/Ք հրամանով հաստատված ուսումնական ծրագրին համապատասխան:
  - 3.2. Մշակել և սահմանված կարգով հնգօրյա ժամկետում ներկայացնել հաստատմանը Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննման և փորձաքննության մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուսումնամեթոդական կենտրոնի կանոնադրությունը, աշխատակարգը և հաստիքացուցակը:
  - 3.3. Գլխավոր հաշվապահ Օ.Բավինայի հետ համատեղ կազմել և հաստատման ներկայացնել կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստման և վերապատրաստման ուսման վարձի գնահատման հաշվարկը և գործունեության նախահաշիվը, հաշվի առնելով ծախսերը մեթոդական ցուցումների, բլանկների, ավարտական վկայականների տպագրության, դասախոսների վարձավճարը և Կենտրոնի աշխատանքները կազմակերպող հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների աշխատավարձը:
  - 3.4. Գլխավոր հաշվապահ Օ.Բավինայի հետ համատեղ մշակել դասընթացների ունկնդիրների ուսման վարձի գանձման ձևակերպման կարգը, հաշվառումը և Կենտրոնի աշխատողներին ու դասախոսներին վճարելու կարգը:
  - 3.5. Մշակել, ներկայացնել հաստատման Կենտրոնի շրջանավարտներին տրվող ավարտական որակավորման վկայականի ձևը և ապահովել դրանց պատրաստումը:
4. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների վերապատրաստումը կազմակերպել երկու տարի պարբերականությամբ:
5. Սույն հրամանի կատարման պատասխանատվությունը դնել Կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Ն.Ա.Բազիկյանի վրա:
6. Սույն հրամանի հսկողությունը վերապահում եմ ինձ: